ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀՊՄՀ

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ. ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ

Հուշարձանի տեղափոխումը, որպես կանոն, առաջ է բերում մշակութասերների իրարանցում, մասնագետների հակընդդեմ, բայցեւ ծանրակշիռ փաստարկներ, դատողությունների ու դիտողությունների բախումներ, արդյունքում ունենում ենք խնդրի վերջնական լուծման «զրո» ընդհանուր հայտարար, բայց՝ երբեմն հուշարձանի պահպանման վերջին հույս կամ միակ ու իրական փրկություն: Վերջինի մասին են վկայում տեղափոխված որմնանկարները, խճանկարները, քանդակները, խաչքարերը, ճարտարապետական կառույցները եւ համալիրները, մինչեւ անգամ՝ ժայռափոր տաճարները: Իհարկե, կան նաեւ ցավալի դեպքեր, երբ, զանազան դժվարություններից խուսափելով, այլ մեթոդներ չկիրառելով՝ տեղափոխումն է ընտրվել որպես պահպանության միջոց՝ հուշարձանին տալով անարդյունավետ եւ ոչ շահեկան կարգավիճակ: Եւ այստեղ է, որ հուշարձանների պահպանության այս պակաս խրախուսելի մեթոդը բազմաթիվ մշակութաբանական հարցեր է առաջացնում, հատկապես՝ պաշտամունքային հուշարձանների պարագայում:

Արդյո՞ք վիշապաքարը, քառակող կոթողը կամ խաչքարը պետք է կտրել ծննդավայրից, բերել ու կանգնեցնել քաղաքային միջավայրում՝ ինչոր շինության առջեւ կամ պուրակում: Արդյո՞ք պատահական է եղել տեղադրման վայրի ընտրությունը (հաշվի առնելով մի շարք հուշարձանների բացատրելի կամ դեռեւս առեղծվածային տեղադրությունները): Արդյո՞ք եկեղեցին տեղափոխումից հետո չի դադարում սրբատեղի հանդիսանալ, կամ հնարավո՞ր է առարկայացած պաշտամունքի հետ տեղափոխել նաեւ հոգեւոր բաղադրիչը: Արդյո՞ք տեղափոխված պաշտամունքային հուշարձանը նույնքան արժանահավատ ու պատկառելի է, որքան իր «օրորոցա-

յին» միջավայրում էր, կամ արդյո՞ք այն երբեմն կեղծիք չի դառնում զբոսաշրջիկի կամ պարզապես հետաքրքրասեր անցորդի համար:

«Արդյոքների» այս շարքը կարող է շարունակվել, բայց կգա նաեւ հակադարձող եւ որոշ դեպքերում հակակշռող «արդյոքների» շարք, ինչպես օրինակ. արդյոք փրկելու համար գերադասելի չէ՞ր տեղափոխել Պալմիրայի հուշարձաններից՝ Բելի տաճարը (1-ին դ.), «Ալլատ առյուծ» արձանը, կամ բաց երկնքի տակ չթողնելու համար՝ հայոց մայրաքաղաք Արտաշատի բաղնիքի խճանկարը, աղետալի վիճակում գտնվող մինասյան որմնանկարները եւ այլն:

Հատուկ ուշադրության են արժանի նաեւ անշարժ հուշարձանների տեղափոխման մերօրյա նախաձեռնությունների առաջացրած խնդիրները: Դրանցից գլխավորն է Երեւանի՝ վերջին տարիների քաղաքաշինական բարեկարգման ծրագրերի շրջանակներում համարակալված, ապամոնտաժված եւ մինչ օրս չվերակառուցված մի քանի հուշարձան-շենքերի վերատեղադրման վայրերի ընտրությունը:

Քննության առարկա դարձնելով հուշարձանի վերատեղադրումը՝ ընդգծենք, որ հատկապես կոթողային հուշարձանների վայրերի փոփոխությունները հանգեցնում են բազմաթիվ խնդիրների: Օրինակ՝ վիշապաքարերի վերատեղադրումները խոչընդոտում են գիտական լիարժեք ուսումնասիրություններին՝ մասնագետներին առերեսելով կոթողի նախնական վայրը գտնելու բարդ խնդրի հետ[1]: Մեկ այլ խնդրի առաջ է կանգնեցրել, բնավ ծայրահեղ անհրաժեշտություն չհանդիսացող, անշարժ հուշարձանների՝ մարզերից մայրաքաղաք ժամանակավոր տեղափոխման, մաքրման, նորոգման, ամրակայման եւ ցուցադրման ծրագիրը[2]: Կարելի է փաստել, որ վերջինի արդյունքում կորսվել է նշված հուշարձանների «անշարժ» կարգավիճակը, քանի որ, ըստ ՀՀ պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների տեղափոխման կարգի ընդհանուր դրույթների 2-րդ կետի՝ «Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների տեղափոխումը կատարվում է բացառիկ՝ նրա զբաղեցրած տարածքի բնակլիմայական, երկրաբանական պայմանների վատթարացման (հեղեղատներ, սողանքներ, նստվածքներ, փլու-

---

[1] **Ա. Պետրոսյան, Ա. Բորոյան (խմբ.),** Վիշապ քարակոթողները, Երեւան, 2015, էջ 269-396:

[2] ՀՀ կառավարությունը 2012 թ. սեպտեմբերի 13-ին ընդունել էր «Պատմության մշակույթի անշարժ հուշարձանների տեղափոխման մասին» որոշում: Նշված որոշման ընդունման համար հիմք էր հանդիսացել Հայաստանի պատմության թանգարանում ՀՀ անկախությանը նվիրված ժամանակավոր ցուցահանդեսի կազմակերպումը, որի նպատակով թույլատրվել էր Երեւան տեղափոխել պատմության եւ մշակույթի թվով 61 անշարժ հուշարձաններ: Ցուցահանդեսի ավարտից հետո՝ 2016 թ. սեպտեմբերին, դրանք պետք է վերադարձվեին իրենց նախկին վայրերը:

զումներ եւ այլն) հնարաւորով հուշարձանի կորուստը կանխելու եւ (կամ) հուշարձանի գրաւեցրած տարածքը պետական կարեւորություն ունեցող արդիւնաբերական, հիդրոտեխնիկական, ինժենեռատրանսպորտային հաղորդակցության եւ այլ բաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով օգտագործման ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում»[3]*:*

Ինչեւէ, քանի որ Հուշարձանի տեղափոխման թեման բազմաբնույթ է, բազմաշերտ, խորաքնին ու բարեխիղճ ուսումնասիրություն պահանջող, ուստի, շրջանցելով այլազան օրինակները, ստորեւ ներկայացնենք եգիպտական ու Հայկական պաշտամունքային կառույցների տեղափոխման ամենաուշագրաւ օրինակները, որոնք, ունենալով ակնհայտ տարբերություններ, ունեն նաեւ հետաքրքիր ընդհանրություններ:

Նախ նշենք, որ տեղափոխվածների թվում կան հայկական մի քանի եկեղեցիներ. դրանցից է ՀՀ սահմաններից դուրս՝ Պարսկահայքի Արտազ գավառի (ներկայիս Իրանի Արեւմտյան Ատրպատականի նահանգ) Ծոր-ծորի վանքի միակ կանգուն շինությունը՝ Ս. Աստվածածին մատուռը: Այն Մակուչայ գետի վրա ամբարտակի կառուցման հետեւանքով 1987-1988 թթ. շուրջ 600 մ տեղափոխվել է ավելի բարձրադիր վայր, որից հետո ամբողջովին վերկանգնվել ու 2008 թ. ընդգրկվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում:

Ինչ վերաբերում է ՀՀ տարածքում տեղափոխված եկեղեցիներին, ապա դրանք նույնպես փոխադրվել են հիդրոտեխնիկական կառույցների (Ախուրյանի եւ Ապարանի ջրամբարների) իրականացման հետեւանքով: Ախուրյանի ջրամբարի տարածքից Զրափի գյուղ (հիմն. է 1970 թ.) են տեղափոխվել Ս. Աստվածածին եկեղեցին եւ նրան կից զանգակատունը (ԺԹ.-Ի. դար՝ տեղափոխված Վերին Զրափի գյուղից), ինչպես նաեւ Է. դարի մեկ այլ եկեղեցի՝ Շիրակավան գյուղից[4]*: Մինչեւ Ներքին Զրափի գյուղից տեղափոխվել է նաեւ հայկական միջնադարյան աշխարհիկ ճարտարապետության առաջնակարգ հուշարձաններից մեկը՝ Ժ.-ԺԱ. դդ. քարավանատունը*[5]*:*

Առանձին պատմություն ունի նաեւ Ապարանի ջրամբարի կառուցման հետեւանքով ապաքնակեցված Զովունի գյուղի վաղմիջնադարյան հուշարձանախմբի պահպանությունը: Ըստ նախնական հաշվարկների՝

---

[3] Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների տեղափոխման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2005 թ. հ. 2338-Ն որոշումը:

[4] Տվյալները վերցված են ՀՀ պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ցանկից:

[5] Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երեւան, 1992, էջ 344:

հուշարձանախմբի Ս. Պողոս-Պետրոս (Ե.-Զ. դդ.)[6] գմբեթավոր եկեղեցուն ջրամբարի ջրերը բացարձակապես չպետք է սպառնային (ցավոք, ջրի մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներով եւ ջրառատ տարիներով պայմանավորված՝ այն ցայսօր անասելի վնասներ է կրում), իսկ Ս. Վարդան (Ե. դար) եւ Թուխ Մանուկ (Դ. դար) եկեղեցիներն ամբողջովին պետք է ծածկվեին ջրով, ուստի, պետական համապատասխան մարմինների որոշմամբ՝ 1960-ականներին պեղվել, չափագրվել եւ տեղափոխվել են մոտակա խաչեր բարձունք[7]:

Նույն տարիներին՝ նախորդ դարի երկրորդ կեսին, տեղափոխման խնդրի առաջ կանգնեց նաեւ համաշխարհային նշանակության հուշարձան՝ եգիպտական ժայռափոր Աբու-Սիմբելի տաճարը: Ինչպես վերը նշված հայկական եկեղեցիները, վերջինս նույնպես պետք էր փրկել հիդրոտեխնիկական կառույցից սպասվող վնասներից: Բանն այն է, որ Ասուանի բարձրաբերձ ամբարտակի կառուցման հետեւանքով Նեղոսի ջրերը սպառնում էին ամբողջովին կլանել նրա ափին կառուցված այդ փառահեղ հուշարձանը:

Աբու-Սիմբելի ժայռափոր տաճարը (Ք. ա. Բ. հազ.) գտնվում էր Նուբիայում՝ Նեղոսի վերին հոսանքի ձախ ափին: Այն հոյակերտ ժայռափոր կառույց էր, որը մինչեւ 55 մետր խորանում էր գրանիտե ժայռի մեջ: Տաճարի հատակագծային հորինվածքը կրկնում էր վերգետնյա եգիպտական տաճարների սխեման: Այն բաղկացած էր պիլոնից (փորագրված ժայռի վրա), բակից, հիպոստիլային դահլիճից եւ սրբավայրից՝ բոլորն էլ ժայռափոր: Նրա ճակատային մասում՝ պիլոնից առաջ՝ մուտքի աջ եւ ձախ կողմերում, ամբողջական ժայռից քանդակված էին հսկայական չափերի (20 մ բարձրությամբ) փարավոնների արձաններ[8]:

Հուշարձանի տեղափոխման համար հայտարարված մրցույթին ստացվեցին մի քանի նախագծեր: Ի վերջո, որոշվեց հսկայական ժայռը մասնատել եւ մաս-մաս տեղափոխել նոր հատկացված հարթակի վրա:

Եգիպտական ժայռափոր տաճարների տեղափոխման հաջող փորձը հետագայում կիրառվեց նաեւ Աբու-Օդայի եւ Ելեսիայի, ինչպես նաեւ վե-

---

[6] Ա. Սահինյան, Ջովոնիի ճարտարապետական հուշարձանախումբը, ԼՀԳ, 1968, թ. 1, էջ 101-120:

[7] Վ. Պետրոսյանց, Նիգ-Ապարանի պատմաճարտարապետական հուշարձանները, Երեւան, 1988, էջ 31-36:

[8] Վ. Հարությունյան, Հին աշխարհի ճարտարապետություն, Երեւան, 1978, էջ 319:

բերկյա տաճարներ՝ Դաքքայի, Կերտասի, Ամանդայի, Դենդուրի, Կալաբշայի եւ մյուսների՝ թվով 23 հուշարձանների փոխադրման համար[9]*:*

Այսպիսով, համադրելով վերոնշյալ «արդյոքների» շարքը, բերված օրինակները եւ ընդունված օրենքը, կարող ենք պնդել, որ տեղափոխումը պետք է իրականացվի միմիայն ծայրահեղ դեպքերում՝ այլընտրանք չունենալու պարագայում՝ իբրեւ հուշարձանի պահպանման վերջին հույս կամ միակ ու իրական փրկություն:

РЕЗЮМЕ

Защита памятников культуры - одна из наиболее важных задач современного общества. Помимо основных методов сохранения памятников используется также метод их перемещения, что менее поощрительно и используется в случае крайней необходимости. В статье представлены положительные и отрицательные эффекты метода перемещения, культурологические наблюдения, несколько проблем, вызванных современным перемещением недвижимых памятников Республики Армения, а также общность обстоятельств перемещения армянских и египетских памятников.

SUMMARY

The preservation of monuments is considered to be one of the most important cultural issues. Besides the basic methods of protecting monuments, there exists also the relocation method, which is less encouraging and is used in the case of extreme emergency. This article presents the positive and negative effects of the relocation method, observations, several problems, which are caused by the contemporary relocation of the immovable monuments of the Republic of Armenia, as well as the common features of relocations between the Armenian and Egyptian monuments.

[9] Կ. Հովհաննիսյան, Ճարտարապետական հուշարձանների վերանորոգումը Սովետական Հայաստանում, Երեւան, 1978, էջ 153-155: